

## ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ ԶԻՆՂԵԿՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

26.08.2013



Օգոստոսի 26-28-ն ընկած ժամանակահատվածում մարզի Հրազդանի, Աբովյանի, Չարենցավանի ու Նաիրիի զինվորական կոմիսարիատներում տեղի կունենան ՀՀ կրթության և գիտության նախարարության և ՀՀ զինվորական կոմիսարիատի համատեղ աշխատանքային ծրագրով նախատեսված եռօրյա ուսումնամեթոդական պարապմունքներ՝ ՀՀ հիմնական, ավագ, միջնակարգ հանրակրթական դպրոցների, կրթահամալիրների, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների զինվորական ղեկավարների մասնակցությամբ: Մարզկենտրոն Հրազդանի զինվորական կոմիսարիատում հիշյալ պարապմունքների բացման արարողությունից առաջ տեղի է ունեցել աշխատանքային խորհրդակցություն, որը վարել է ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ Կ. Մարգարյանը, ողջունել ձեռնարկի մասնակիցներին՝ միաժամանակ ներկայացնելով զինվորական ղեկավարների աշխատանքների արդյունավետության բարձրացման ուղղությամբ Կոտայքի մարզպետարանի կողմից իրականացվող նախաձեռնություններն ու ծրագրերը, վերջիններիս գործունեության կարևորություններն ու գերակայությունները: